ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» ապրիլի 2006թ. N 242

ք.Ստեփանակերտ

Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից հարկային մարմին ներկայացվող տեղեկությունների մասին

«Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ՝

ա) ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողները յուրաքանչյուր ամսվա համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում տեղեկություններ տվյալ ամսվա ընթացքում գազալցման տվյալ կայանի (կետի) միջոցով *ստացված*[*2)] գազի ֆիզիկական ծավալների մասին՝ արտահայտված խորանարդ մետրերով.

բ) սույն կետի «ա» ենթակետում նշված տեղեկությունները ներկայացվում են յուրաքանչյուր գազալցման կայանի (կետի) համար առանձին՝ «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում:

2. Հաստատել ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից *ստացված*[*2)] գազի ֆիզիկական ծավալների մասին տեղեկությունների ներկայացման ձևը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողներն իրացված գազի ֆիզիկական ծավալների մասին տեղեկություններն առաջին անգամ ներկայացնում են 2006 թվականի ապրիլ ամսվա համար:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության 2006թ.
ապրիլի 26-ի N 242 որոշման

ՁԵՎ

_____
(սպասարկող ստորաբաժանման անվանումը)

Փաստաթղթի հերթական համարը_____
Լրացման ամսաթիվը _____ _____ 200__թ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից գազի ֆիզիկական ծավալների մասին

1. Հարկ վճարողի հաշվառման համարը	
2. Տեղեկությունների ներկայացման ժամանակահատվածը	տարեթիվը ☐☐☐☐ ամիսը ☐☐
3. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	_____ _____
4. Գտնվելու վայրը	
5. Գազալցման կայանի (կետի) գտնվելու վայրը	
*5[1]. *[1]) Գազալցման կայանի (կետի) տեսակը*	*բնական գազի գազալցման (գազալիցքավորման)* ☐ *հեղուկ գազի գազալցման (գազալիցքավորման)* ☐
6. *Ստացված*[*2)] գազի ֆիզիկական ծավալը՝ խոր.մ.	

Հաստատագրված վճար վճարողի պաշտոնատար անձը _____
(անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

Կ.Տ.

____ _____ 200 թ.

ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**1) ԼՂՀ կառավարության 06.05.08թ.«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի թիվ 242 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 335 որոշման խմբագրությամբ*

**2) ԼՂՀ կառավարության 24.02.09թ.«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի թիվ 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 88-Ն որոշման խմբագրությամբ*